

ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ-ի «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամ»-ի ֆինանսավորմամբ «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» ծրագրի շրջանակներում Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանի (Գերմանիա) գործուղման հաշվետվություն

Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանը Գերմանիայի գերազանցության աստիճան ունեցող 11 համալսարաններից մեկն է, որը շնորհվել է 2012թ.: Ուսանողական համակազմը 84000 է, ֆակուլտետների թիվը՝ 14 միավորված 5 դպրոցի շրջանակներում: Ուսուցման լեզուն՝ գերմաներեն և անգլերեն, սակայն աստիճանաբար ուսուցման լեզուն դառնում է անգլերեն: Համալսարանը նորարարության, ճարտարագիտության և հետազոտության արտահանման գերազանցության կենտրոն է:

Հեռավար կրթության պատմության ներկայացում Գերմանիայում և Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանում:

Դրեզդենի տեխնոլոգիական համալսարան

Հեռավար կրթության իրականացման առանձնահատկությունները Դրեզդենի տեխնոլոգիական համալսարան (ԴՏՀ)

- Ոչ մի տարբերություն չի դրվում դիպլոմի միջև հեռավար և առկա կրթության արդյունքով տրվող դիպլոմների միջև:
- Քննությունները հանձնում են առկա ուսանողների հետ համատեղ՝ առանց որևէ տարբերակման ձևի և իրականացման միջև:

- Տևողությունը սահմանված է ավելի երկար, քան առկա ուսուցման տևողությունը՝ երկու անգամ երկար, որը փոխհատուցվում է առավել քիչ քննություններով:
- Համալսարանը պարբերաբար կազմակերպում է խորհրդակցություններ երկու շաբաթը մեկ պարբերականությամբ:
- Ի տարբերություն առկա ուսուցման, հեռավար կրթությունը վճարովի է Դրեգդենի տեխնոլոգիական համալսարանում:

Տվյալ պահին ԴՏՀ-ում առավել քան 400 ուսանող սովորում են հեռավար համակարգով: Հեռավար կրթության դեքպում ԴՏՀ-ը առաջարկում է երեք հնարավորություն՝ բակալավրի աստիճան, դիպլոմավորված մասնագետի աստիճան, մագիստրոսի աստիճան: Գերմանիայում հեռավար կրթությամբ հիմնականում հետաքրքրված են արդեն աշխատող անձինք, որոնք գիտելիքների թարմացման կամ լրացուցիչ կրթության կարիք ունեն՝ աշխատանքի առաջխաղացման և կարիերայի նպատակներով: ԴՏՀ-ում ուսանողները ցանկացած պահին կարող են տեղափոխվել ուսուցման առկա համակարգ առանց որևէ սահմանափակման:

Վերապատրաստման ընթացքում ներկայացվեց նաև Հագենի համալսարանի գործունեությունը, քանի որ Հագենի համալսարանը ամբողջովին հեռավար կրթություն տրամադրող միակ պետական համալսարանն է Գերմանիայիում, որն ունի 5 ֆակուլտետ: Տվյալ համալսարանում իրականացնում են լրացուցիչ կրթություն վերապատրաստումների տեսքով, առաջարկում են 12 մագիստրոսական կրթական ծրագիր և 10 բակալավրիական կրթական ծրագիր: Մագիստրոսական կրթական ծրագրի արժեքն է 700-1200 եվրո մեկ ուսումնական տարվա համար, մեկ կիսամյակը ներառում է 15-20 դասընթաց: Ուսման վճարը

հաշվարկվում է դասընթացներին հատկացվող կրեդիտատարությունից, մագիստրոսական թեզին հատկացվում է 60 կրեդիտ:

Հագենի համալսարանում հանձնում են երկու ընդունելության քննություն: Ընդունելության գործընթացը սկսվում է առցանց գրանցմամբ, փաստաթղթերի ներկայացմամբ փոստով կամ առցանց, սակայն նախքան ուսումնառության սկիզբը պարտավոր են ներկայացնել փաստաթղթերի բնօրինակը: Ուսումնառությունը սկսվում է հոկտեմբեր ամսից և տևում է մինչև փետրվար, փետրվար ամսին անցկացվում է քննաշրջանը, իսկ գարնանային կիսամյակը տևում է ապրիլ ամսից մինչև հուլիս, քննաշրջանը՝ օգոստոս, արձակուրդ՝ սեպտեմբեր ամսին:

Կրթական ծրագիրը բաղկացած է պարտադիր դասընթացներից, կամընտրական դասընթացներից և մագիստրոսական թեզից: Պրակտիկան ուսանողն անցնում է ընկերությունում, որը պարտավոր է գտնել ուսանողն ինքը՝ ապացուցելու իր կարողությունները որպես բիզնեսի կառավարման ապագա մասնագետ:

Պարտադիր բաղադրամասը բաղկացած է 10 մոդուլից, յուրաքանչյուր դասընթացն ավարտվում է երկու-ժամյա քննությամբ, որն տեղի է ունենում համալսարանում:

Կամընտրական դասընթացները թիվը տարբեր է, իսկ թեզերի պաշտպանությունը տեղի է ունենում դեմ առ դեմ: Ուսանողներն ուղարկում են հանձնարարությունները, որը ստուգվում է գրագործության ծրագրով, այնուհետև գնահատվում, իսկ դասախոսները ներկայացնում են միջանկյալ հաշվետվություններ ուսանողի առաջադիմության մասին:

Համալսարանի կրթության որակի ապահովումն ստուգվում է արտաքին հավատարամագրող կամզակերպության կամ պետության կողմից լիագորված մասնավորության ընկերության կողմից:

Դասագրքերը մատակարարվում են առցանց գրադարանի կողմից՝ ուղարկվելով ուսանողների էլ-հասցեներին: Սակայն դասագրքերի արդիականությունը շատ ավելի կարևոր հարց է, քանի որ ըստ համալսարանի ներքին կանոնակարգի, գրքերը չեն կարող առավել քան 10 տարվա հնություն լինել: Դասախոսները դասագրքերը տպագրում են իրենց ծախսով կամ հրատակչությունների (արտաքին) ֆինանսավորմամբ, կամ պարտավոր են պատրաստել դասախոսությունները, որոնք ուսանողները ներբեռնում են իրենց համակարգիչներ: Դասախոսները նաև մշակում են էլեկտրոնային գրքեր, որոնք հանդիսանում են են մտավոր սեփականության օբյեկտ, որոնք ուսանողները պարտավոր են գնել:

Գերմանիայում դասերին և դասախոսությունը այլևս պարտադիր բաղադրիչ չի համարվում և չի գնահատվում: Ուսանողներից չի պահանջվում պարտադիր ձևով մասնակցել բոլոր դասախոսություններին:

Ուսանողների գնահատումը՝

Վարժությունների գնահատում

Վիդեոքնությունների գնահատում

Քննությունների հաճախելիության գնահատում

Քննություններն անցկացվում են երկու քննող դասախոսների մասնակցությամբ և քննվում են երկու ուսանող միաժամանակյա՝ ապահովելու քննման գործընթացի անաչառությունը և անկողմնակալությունը: Ուսանողը բողոքարկում է քննության գնահատականը փաստաբանի օգնությամբ մեկամսյա ժամկետում: Եթե քննությունները անցկացվում են խմբային պրեզենտացիաները տեսքով, ապա քննությունն պարտադիր ձևով նաև տեսանկարահանվում է:

Այլ երկրներից ուսումնառելու դեպքում ուսանողները կարող են քննությունը հանձնել տվյալ երկրում տեղակայված ուսումնական կենտրոններում: Տվյալ լուծումը կարող է գործել սփյուռքահայ ուսանողների դեպքում:

Ակադի համալսարանը առաջին մասնավոր համալսարանը, որն իրականացնում է հեռավար կրթություն:

Վերապատրաստման ընթացքում այցելություններ կազմակերպվեցին Բիզնեսի կառավարման ֆակուլտետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին և գրադարան:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնում ներկայացվեց Student-life-cycle management համակարգը, որը ներկայումս մշակման փուլում է գտնվում և միացնում է Մուդլ հեռավար ուսուցման համակարգը և համալսարանի ներքին տեղեկատվական համակարգը, համալսարանի վեբկայքը, որը նաև ծառայում է որպես ուսումնական նյութերի շտեմարան, որտեղ ուսանողները մուտք ունեն մեկ միասնական նույնականացմամբ, ինչպես նաև 'Opal' համակարգը: Ներկայացվեցին առցանց նյութերի պատրաստման եղանակները (վիդեոդասախոսություններ, պրեզենտացիաներ, վարժությունների համակարգ): ԴՏՀ-ում

առանձին բաժին՝ Մեղիա կենտրոնը, պատասխանատու է դասախոսներին աջակցելու վիդեոդասախոսությունների և առցանց նյութերի պատրաստման համար:

Վերապատրաստման ընթացքում ներկայացվեց նաև ECTS-ի կիրառման պրակտիկան, ECTS թիրախ խմբերը, ձեռնարկը, ուսումնական ծանրաբեռնվածություն – լսարանային ժամեր և կրթական վերջնարդյունքներ – կոմպետենցիաներ համեմակա՞ն աղերսները, ECTS մոդուլի ստեղծման եվրոպական կադապարը:

Ներկայացվեց Tuning մեթոդաբանությունը՝ բարձրագույն կրթության ոլորտում համալսարանների պրոֆիլների, կոմպետենցիաների և կրթական վերջնարդյունքների հիման վրա ծրագրերի կազմման մեթոդաբանությունը և տրվեցին լրացուցիչ նյութեր առավել խորը ուսումնասիրման նպատակով:

Քանի որ քննությունը գնահատման ամենատարածված ձևն է՝ մասնավորապես հեռավար կրթության ոլորտում, ներկայացվեցին քննությունների կազմման և անցկացման կարգը և լրացուցիչ նյութեր տրամադրվեցին առավել խորը ուսումնասիրման նպատակով:

Ներկայացվեց նաև լեզուների ուսուցման հաղորդակցման մեթոդը և թե ինչպես այդ մեթոդաբանությունը կարելի է կիրառել հեռավար ուսուցման ոլորտում:

Հակիրճ ներկայացվեցին Որակի ապահովման գործընթացների պատմությունը ԵԲԿՏ-ում, կրթական վերջնարդյունքները, գնահատման գործընթացներն ու ծրագրի մշտադիտարկման առանձնահատկությունները: